

Պ. ԿԱՐԱԳԵՏ ԳԱԼՃԵԱՆ

Մուրատ - Ռափայելեան վարժարանի վարժաւարտ աշակերտաց մին, Պ. Կարապետ Գալճեան, Կոստանդնուպօլսեցի, Օգոստոս ամսոյ 18ին Հանդիսաւոր քննութիւն տուաւ Չափաբերական ուսմանց, վարժարանին դասարանին մէջ, առաջի Ուղղչի վարժարանին և Ուսումնապետին, և Օսմանեան Հիւպատին՝ Ֆռանչէսգօնի Էֆէնտիի, և արտաքին և ներքին վեց ուսուցչաց, քննիչքն էին,

Տեարք ԳԱՍՍԱՆԻ (Ասպետ), ուսուցիչ բարձրագոյն չափաբերութեան յարգունի վարժոցն մասնագիտութեան 'ի վեներսիկ.

« ԿրէճձԻՈՅ, ուսուցիչ բնագիտական և չափաբերական ուսմանց, և ուղղիչ արքունի դպրոցին մասնագիտութեան 'ի վեներսիկ.

« ԴիէՏԷ, ուսուցիչ բնագիտութեան յարգունի լիկէոնն Մարգոյ - Բօյոյ 'ի վեներսիկ.

Քննութեան նիւթերն էին.

1. Թուարանութիւն.
2. Վարդապետական թուարանութիւն.
3. Տարրական Գրահայիւ.
4. Բարձրագոյն Գրահայիւ.
5. Գերազանցական Վերլուծութիւն (Տարբերական).
6. Մակարդակաչափութիւն.
7. Հաստատաչափութիւն.
8. Կոնական հատուածք.
9. Հարթ Եռանկիւնաչափութիւն.
10. Գնտային Եռանկիւնաչափութիւն.
11. Գծածիգ երկրաչափութիւն.
12. Վերլուծական երկրաչափութիւն.
13. Բարձրագոյն երկրաչափութիւն.

Երկու ժամ տեւեց քննութիւնն. և կարի քաջ Հանդիսացաւ քննեալը. Վասն որոյ արժանացաւ յատուկ Աստիճանագրի (Diplôme spécial), որով քննիչք հրատարակեցին զՊ. Գալճեան կարող և արժանաւոր յուսուցչութիւն Տարրական և Բարձրագոյն Չափաբերական ուսմանց յո և է վարժոցի:

Սոյն Աստիճանագիրն ստորագրուեցաւ 'ի ներկայից, և Օսմանեան Հիւպատն վաւերացոյց ստորագրութիւնքն. որպէս վաւերացոյց նաև իտալական Աստիճանագրին գաղղիարէն թարգմանութիւնը:

իննսուն էջերէ բաղկացեալ Մրցագիր (Thèse) մի ալ ներկայացոյց քննեալն՝ Անհնարին Գանակութեանց (Quantités imaginaires) վրայ, յորում իւր յատուկ հանճարեղ դիտողութիւնքն ալ աւելցուցեր էր կրկին Հայեցողութեանց սահմանատուութեան և ապացուցութեան մէջ, և 'ի մատենից տառարկեալ այլ և այլ հարցմանց լուծումն տուած էր։ Սոյն գրուածքն՝ երկարատև աշխատութեան և հնաբազիւտ տաղանդի արդիւնք դատեցաւ 'ի քննող գիտնոց։

Պ. Կարապետ Գալճեան, որ մտած է 'ի Մուրաւ-Ռափայելեան վարժարան յ13 Հոկտեմբերի 1884 ամի, ունի նաև Առաջին աստիճանի Վկայագիր մի վասն Բնագիտութեան, որոյ հանդիսաւոր քննութիւնն՝ նմանօրինակ յաջողութեամբ անցոյց յառաջագոյն։ Իւր ուսուցիչն էր Ասպետն Նրանօն, համբաւաւոր ուսուցիչ բնագիտութեան յարքունի վարժոցս քաղաքիս։

ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆՔ

ՍԱՀՄԱՆՍԱՅ ՊԱԵՐՔ

Ա

Երնէկ մարդուն՝ ար չերթար

Այսպարըշտաց խորհրդին,

Մեղաւորաց ճանապարհն

Նա՝ կանգ չառնուր կամովին։

Ժանտ՝ խառնակեաց մարդկանց քով

Նա չի երթար կամակար։

Մեղաւորաց խորհրդով

Կը փոխէ իւր ճանապարհ։

Աստուածային օրէնքներ

Նա կ'ընդունի մրտադիր։

Կը մրտածէ զօր գիշեր՝

Նոցա՝ վերայ անձանձիր։

Նա նըման է այն Ժառին

Որ առնկած է ջրաշառ

Ճամբու վերայ. առնին

Տալով պըրուզ յոյժ առատ։

Նորա տերեք գալար միշտ՝

Զըմեռ առնն չեն թափիր,

Ինչ բանի որ գընէ միտ

Կը յաջույի ժիրաժիր։

Ամբարըշտաց ոչ այսպէս,

Յաջողութիւն չիք իսկի,

Նոցա գործեր փոշուղ պէս

Հովք ցիր ցան կը տանի։

Ամբարիշտ մարդն յատենի

Կը լինի միշտ գատապարտ։

Եւ յարգարոց ժողովի

Խըստիւ գատուի մեղապարտ։

Տիրով առիւ բաց յայտնի

Է արգարոց ճանապարհ։

Ամբարըշտացն կը տանի

Դէպ 'ի կորուստ զւ թաւար։